www.para.tv

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանին
Para TV-ի լրագրող Անուշ Մուրադյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգարժան պարոն Սանոսյան.

ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝ խնդրում եմ ինձ տրամադրել վերջին մեկ տարում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի և տեղակալների պարգևավճարների վերաբերյալ տեղեկություններ՝ առանձին կետերով նշելով, թե որ պաշտոնյան որքան պարգևավճար է ստացել 2019 թ. հունվարից մինչեւ դեկտեմբեր, եւ եթե արդեն պարզ է ու հստակեցված՝ նաեւ 13-րդ աշխատավարձի չափն ու պարգեւատրվողների ցանկը:

Խնդրում եմ տրամադրել նաև՝

- Ամբողջ աշխատակիցներին տրամադրված պարգևավճարների ընդհանուր չափը՝ ընթացիկ տարվա առաջին ամսվանից սկսած /նաեւ 13-րդ աշխատավարձի մասով/
- Որքա՞ն է պետական բյուջեով նախատեսված պարգեւատրման ֆոնդից տրամադրվել ՀՀ Գեղարքունիքի մազրպետարանի աշխատակիցներին:

Խնդրում եմ հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում, իսկ հարցման պատասխանն ուղարկել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Հ.Գ. Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կանխավ շնորհակալ եմ

Անուշ Մուրադյան

Հասցե՝ Սարյան 24/5, 0002, Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 11 55 00 06
Էլ. հասցե՝ info@paradiplomacy.am
Address: RA, Yerevan, 0002, Saryan 24/5
Tel: +374 11 55 00 06
E-mail: info@paradiplomacy.am